

ՀՀ ՕՈՒՆ Վերլուծությունը

ՀՏԳ՝ 339.727.22/24

Հարությունյան Տիգրան Վ.

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, ԵՊՀ ՏԿՖ (Երևան, ՀՀ)

Գևորգյան Արմինե Վ.

ՀՀ ԳԱԱ Մ.Զոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ (Երևան, ՀՀ)

mrsarminegevorgyan1987@gmail.com

Հանգուցաբառեր՝ ՕՈՒՆ կառուցվածք, գրավիչ ոլորտներ, հիմնական ներդրող երկրներ, համախառն հոսքեր, տեսակարար կշիռ

Анализ ПИИ РА

Арутюнян Тигран В.

д.э.н., доцент, Факультет Экономики и менеджмента, ЕГУ (Ереван, РА)

Геворгян Армине В.

соискатель Института экономики им. М. Котаняна, НАН РА (Ереван, РА)

mrsarminegevorgyan1987@gmail.com

Аннотация: После распада СССР Республика Армения потеряла все внешнеэкономические связи, которые ранее согласовывались на общесоюзном уровне, и была вынуждена установить новые экономические связи для развития страны. На пути к приватизации некоторые предприятия стали собственностью иностранных резидентов, что положило начало притоку прямых иностранных инвестиций в Армению.

Анализ структуры прямых иностранных инвестиций РА показывает, что до сих пор сферы телекоммуникаций, электроэнергетики, газа, добычи полезных ископаемых были в основном привлекательной для иностранных инвестиций. При этом основными странами-инвесторами были Россия, Франция, Словения и Иран.

Ключевые слова: Структура ПИИ, привлекательные отрасли, основные страны-инвесторы, валовые потоки, удельный вес.

Analysis of the FDI of RA

Harutyunyan Tigran V.

Doctor of Economic Sciences, Lecturer at Faculty of Economics and Management, YSU (Yerevan, RA)

Gevorgyan Armine V.

Researcher at the M. Kotanyan institute of economics, NAS RA (Yerevan, RA)

mrsarminegevorgyan1987@gmail.com

Annotation: After the collapse of the USSR, the Republic of Armenia lost all foreign economic relations, which were previously coordinated at the all-Union level, and had to establish new economic relations for the development of the country. On the way to privatization, some enterprises were also owned by foreign residents, which started the inflow of FDI in Armenia.

The analysis of the structure of the FDI of RA shows that up to now the spheres of telecommunication, electricity, gas, mining have been mainly attractive for foreign investments. And the main investor countries have been Russia, France, Slovenia and Iran.

Keywords: FDI structure, attractive sectors, major investing countries, gross flows, specific weight.

Ներածություն: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը կորցրեց բոլոր արտաքին տնտեսական կապերը, որոնք նախկինում համակարգվում էին համամիութենական մակարդակով, և ստիպված էր ստեղծել նոր տնտեսական կապեր երկրի զարգացման նպատակով: Այս ճանապարհը Հայաստանի համար բավականին բարդ էր, քանի որ ներկայիս պետությունը չունեւր սովետական պետության ֆինանսական հնարավորությունը որպեսզի կարողանար պահպանել նախկինում գործող պետական ձեռնարկությունների անխափան գործունեությունը: Այդ պատճառով


երկրում սկսվեց պետական ձեռնարկությունների համատարած մասնավորեցման գործընթաց: Մասնավորեցման ճանապարհին որոշ ձեռնարկությունների սեփականատերեր դարձան նաև օտարերկրյա ռեզիդենտները, ինչը սկիզբ դրեց ՀՀ-ում ՕՈՒՆ ներհոսքի:

Մեթոդաբանություն: Հոդվածում վերլուծությունը կատարվել է համեմատական վերլուծության և համադրման եղանակներով:

Վերլուծություն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ներդրումների ներգրավումը անկախացման տարիներից մինչ օրս չի գրանցել որևէ հստակ պարբերականություն. Օտար-

երկրյա ներդրումները ՀՀ-ում կատարվում են կամայական պարբերականությամբ: Բացի այդ ՕՈՒՆ ներհոսքը Հայաստանում ունի հստակ ընդգծված յուրահատկություն՝ օտարերկրյա


ներդրումները թե՛ ոլորտային առումով և թե՛ ներդրող երկրների կառուցվածքով զգալի կենտրոնացված է: ՀՀ ՕՈՒՆ դինամիկան պատկերված է գծապատկեր 1-ում:



Պատկեր 1. ՀՀ ՕՈՒՆ դինամիկան 2010-2020 թթ., մլն. դրամ [2]

Ինչպես տեսնում ենք գծապատկերից՝ 2010-2011 թթ. արձանագրվել է ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների աճ, որը մասամբ պայմանավորված էր ետնգնաժամային կայունացմամբ: Այդուհանդերձ բավական մտահոգիչ է 2011 թ.-ից սկսած և օտարերկրյա ընդհանուր ներդրումների պարագայում մինչև 2018 թ., իսկ ՕՈՒՆ-ի պարագայում՝ մինչև 2016 թ. շարունակվող մեծ թափով անկման միտումը: Այս անկման տեմպը կարելի է մասամբ բացատրել մի քանի խոշոր ներդրումային ծրագրերի ավարտով, մասնավորապես՝ «Զվարթնոց» օդանավակայանի նոր տերմինալի կառուցման ծրագրի դադարեցմամբ, և «Օրանժ Արմենիա»-ի հայաստանյան շուկայից դուրս գալու միտմամբ, որի արդյունքում օտարերկրյա ներդրումը փոխարինվեց տեղական կապիտալով:

Երբեմն տնտեսագիտական գրականության մեջ խոշոր ներդրողներ են համարվում այն երկրները, որոնց կողմից կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումները տվյալ երկրի ընդհանուր ՕՈՒՆ կազմում ունեցել է 5%-ից ավելի տեսակարար կշիռ [1, էջ 26] : Նույն սկզբունքով վերլուծելով ՀՀ ՕՈՒՆ ներդրումների կառուցվածքը՝ կարող ենք ասել, որ 2010 թ. ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր ծավալում 5% և ավելի տեսակարար կշիռ ունեն Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան և Արգենտինան: Այդուհանդերձ, կարծում ենք, որ ոչ պակաս կանոր է նաև 1%-ից ավել տեսակարար կշիռ ունեցող երկրների կողմից ՕՈՒՆ ներհոսքը: Այդ պատճառով Պատկեր 2-ում ներկայացված է 2010 թ. ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր ծավալում 1%-ից ավել տեսակարար կշիռ ունեցող երկրների կազմը:



Պատկեր 2. 2010 թ. ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր ծավալում 1%-ից ավել տեսակարար կշիռ ունեցող երկրները [2]

2019 թ. պատկերը հետևյալն է: ՀՀ ՕՈՒՄ գուտ ներհոսքի ընդհանուր ծավալում 5% և ավելի տեսակարար կշիռ ունեն Արգենտինան՝ 16%, Կիպրոսը՝ 11%, Իտալիան՝ 23%, Ռուսաստանը՝ 22%: Չուտ հոսքերում 1%-ից ավել տեսակարար կշիռ ունեցող երկրները հետևյալներն են՝ Կուբան, Ֆինլանդիան, Նիդերլանդները և Շվեյցարիան [2] : 2019 թ. համար վերլուծությունը չի ներկայացվում գծապատկերի միջոցով, քանի որ ՀՀ ՎԿ կողմից փոփոխվել է ՕՈՒՄ ներկայացման մեթոդաբանությունը. եթե 2010 թ. մեթոդաբանությամբ ՀՀ ՕՈՒՄ տվյալները ներկայացված են տվյալ տարվա ՕՈՒՄ ներհոսքի տեսքով, ապա 2019-2020 թթ. համար տվյալները ներկայացված են ՕՈՒՄ գուտ հոսքի տեսքով, ինչի արդյունքում մի շարք երկրների պարագայում տվյալները բացասական են, ուստի ՀՀ ՎԿ կողմից ներկայացվող այս տվյալներով հնարավոր չէ ստանալ ՕՈՒՄ 100%-ը, որն անհրաժեշտ էր գծապատկերի կազմման համար:


Եթե դիտարկենք 1988 թ. մինչև 2020 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունների) ՀՀ ՕՈՒՄ համախառն հոսքը, ապա այս տեսանկյունից ՀՀ ՕՈՒՄ ընդհանուր ծավալում 1% և ավելի

տեսակարար կշիռ ունեցող երկրները ներկայացված են Այուսակ 1-ում:

Այուսակ 1. 1988-2020 թթթ. Հայաստանի ՕՈՒՄ համախառն ներհոսքի կառուցվածքը՝ ըստ 1%-ից ավելի տեսակարար կշիռ ունեցող երկրների [3]:

Երկիր	%	Երկիր	%
Ռուսաստան	50.59	Շվեյցարիա	2.06
Ֆրանսիա	10.15	Իտալիա	1.13
Գերմանիա	5.12	Իրան	5
Կիպրոս	2.59	Կայմանի կղզիներ	4
Կանադա	1.38	Մյովենիա	6
Միացյալ Թագավորություն	2.02	Ուկրաինա	4
Լիբանան	2.6	Իսրայել	4
Արգենտինա	3.51	Իսպանիա	3
Լյուքսեմբուրգ	2.83	Սիրիա	3
ԱՄՆ	2.75	Թուրքմենստան	2
Հունաստան	2.64	Ավստրիա	2
Ջերսի	3.03	Թուրքիա	2

Ըստ այդմ՝ ՀՀ ՕՈՒՄ համախառն ներհոսքում Ռուսաստանն ունի 51% տեսակարար կշիռ, Ֆրանսիան՝ 10% և Գերմանիան՝ 5%: Իսկ 1%-ից ավելիի տեսակարար կշիռ ունեն Կիպրոսը, Կանադան, Միացյալ Թագավորությունը, Լիբանանը, Արգենտինան, Լյուքսեմբուրգը, ԱՄՆ-ն, Հունաստանը, Շվեյցարիան, Իտալիան և Ջերսի կղզին, որը թեպետ առանձին պետություն չէ, այդուհանդերձ տեսակարար կշիռ մեծության պատճառով ՀՀ ՎԿ-ն այս տվյալը ևս ներկայացնում է:



Գծապատկեր 3. 2010 թ. ՀՀ ՕՈՒՄ ներհոսքի ոլորտային բաշխվածությունը [2]

Ինչ վերաբերում է ներդրումների ոլորտային բաշխվածությանը, ապա 2010 թ. ՀՀ ՕՈՒՄ ներդրումները հիմնականում իրականացվել են հեռահաղորդակցության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի

մատակարարման, հանքարդյունաբերության, բուսաբուծության և անասնաբուծության, խմիչքների արտադրության, ցամաքային և օդային տրանսպորտի, անշարժ գույքի ոլորտներում՝ գծապատկեր 3:

2019 թ. տվյալների վերլուծությունը փաստում է այն մասին, որ 1%-ից ավելի ՕՈՒՆ ներհոսք ապահովվել է հետևյալ ոլորտներում՝ բուսաբուծության և անասնաբուծություն՝ 2%, մետաղական հանքաքարի արդյունահանում՝ 3%, սննդամթերքի արտադրություն՝ 2%, էլեկտրականության, գազի, գոյորշու և լավորակ օդի մատակարարում՝ 74%, մեծածախ առևտուր՝

8%, մանրածախ առևտուր՝ 2%, ցամաքային և օդային տրանսպորտ՝ 2-ական տոկոս, կազմության կազմակերպում՝ 5%, անշարժ գույք՝ 16% [2] :

Ինչ վերաբերում է 1988-2020 թթ. համախառն ՕՈՒՆ ներհոսքի բաշխվածությանը՝ ըստ ոլորտներին, ապա այն ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 1988-2020 թթ. Հայաստանի ՕՈՒՆ համախառն ներհոսքի կառուցվածքը՝ ըստ 1%-ից ավելի տեսակարա կշիռ ունեցող ոլորտների [3]:

Ոլորտ	%
բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ	1.33
մետաղական հանքաքարերի արդյունահանում	1.52
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	5.7
հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն	4.02
Իսմիչքների արտադրություն	4.64
հիմնական մետաղների արտադրություն	2.05
էլեկտրականության, գազի, գոյորշու և լավորակ օդի մատակարարում	43.37
մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից	1.32
ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով	3.51
օդային տրանսպորտի գործունեություն	1.8
կազմության կազմակերպում	2.07
հեռահաղորդակցություն	16.17
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	4.64

Այսպիսով, ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչ օրս օտարերկրյա ներդրումների համար հիմնականում գրավիչ են եղել հեռահաղորդակցության, էլեկտրականության, գազի, հանքարդյունաբերության ոլորտները: Իսկ հիմնական ներդրող երկրները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Սլովենիան և Իրանն են:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Սարգսյան Լ. Ն. և ուրիշներ**, Հայաստանի ներդրումները մարտահրավերներ և հնարավորություններ / Լ. Սարգսյան և ուրիշներ: -Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020, 320 էջ:
2. ՀՀ ՎԿ էլեկտրոնային բազայի տվյալների՝ <https://www.armstat.am/am/?nid=14> օտարերկրյա ներդրումներ
3. https://www.armstat.am/file/article/sv_02_21a_420.pdf

Տժանա/Հանձնվել է՝ 05.10.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 19.10.2021
 Принята/Ընդունվել է՝ 26.10.2021